«ՀԱՍԱՆԵԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (CLASS) ԾՐԱԳԻՐ

«Կանայք, խաղաղություն, անվտանգություն» բաղադրիչ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլաններ մշակող» փորձագետի

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը, Մանկական զարգացման հիմնադրամը, Կանանց աջակցման կենտրոնը և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ) հիմնադրամը «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի միջոցով աջակցում են Հայաստանում սոցիալական պաշտպանության և բռնության կանխարգելման համայնքահեն համակարգի բարելավմանը, առավել խոցելի, այդ թվում՝ պատերազմից տուժած երեխաների և ընտանիքների կյանքի բարելավմանը:

Վերոնշյալ ծրագիրը մեկնարկել է դեռևս 2017թ-ին, իսկ ԱՌՆԱՊ հիմնադրամը ծրագրի գործընկեր է դարձել այս տարի:

«Կանայք, խաղաղություն, անվտանգություն» բաղադրիչի ներքո՝ ԱՌՆԱՊ հիմնադրամը իրականացնելու է մի շարք գործողություններ, որոնք նպատակաուղղված են համայնքների դիմակայունության բարձրացմանը: Դրանք են.

1. Հնարավոր արտակարգ իրավիճակների (ռազմական կոնֆլիկտի, երկրաշարժի այլ վտանգի հետևանքով առաջացած) ժամանակ տեղահանված և/կամ տարհանված բնակչությանը ընդունող համայնքի կողմից ձեռնարկվող, անհրաժեշտ գործողությունների (այդ թվում՝ սոցիալական ծառայությունների տրամադրմանն ուղղված) ընթացակարգերի մշակումը:
2. Մշակված ընթացակարգերը թիրախ 9 խոշորացված համայնքի աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) պլաններում ինտեգրելը: ԱՌԿ պլանի մշակումը շահառու այն համայնքների համար, որոնք չունեն համայնքային մակարդակում ԱՌԿ պլան:
3. Ընթացակարգերի կիրառման նպատակով վերապատրաստման դասընթացների իրականացումը՝ ներգրավելով համայնքային ծառայողներին (այդ թվում սոցիալական աշխատողներ), ՏԻՄ-երին և շահագրգիռ այլ կառուցների ներկայացուցիչներին (այդ թվում տարածքային սոցիալական ծառայություններ):
4. «Աղետներին պատրաստվածության բարձրացում» թեմայով դասընթացների իրականացումը թիրախ համայնքներում՝ երեխաների, դեռահասների և մեծահասակների ներգրավմամբ:

Հիմք ընդունելով և ընդհանրական ուսումնասիրելով (իրականացվել է սույն ծրագրի գործընկերներ կառույցների կողմից) 2020թ-ի արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը՝ բացահայտվել և ընդգծվել են մի շարք խնդիրներ տեղահանված անձանց տարբեր բնակավայրերում ընդունման, կարիքների գնահատման, սոցիալական անհրաժեշտ ծառայությունների տրամադրման, հումանիտար օգնության ընդունման, բաշխման և համակարգման հետ կապված: Գրանցվել են նաև բռնության, անհանդուրժողականության դեպքեր տեղացի բնակչության կողմից՝ հիմնված տեղահանվածների գործողությունների և/կամ նրանց նկատմամբ առավել ուշադրության վրա: Ընդունող համայնքները պատրաստ չեն եղել ստեղծված իրավիճակին արձագանքելու, գործնականում նաև չեն գնահատել իրենց ներուժը տեղահանվածներին ընդունելու տեսանկյունից (ինչքան մարդ կարող են ընդունել, ինչ ռեսուրսներ ունեն նրանց կենսաապահովման խնդիրը լուծելու համար, ինչպես տեղաբաշխել տեղահանվածներին և այլն): Բացահայտվել են նաև մի շարք այլ խնդիրներ (օրենսդրական բացեր, տեղահանվածների մասին տվյալների մեկ միասնական բազայի բացակայություն, տվյալների պաշտպանության կամ տրամադրման խնդիրներ, անհատների և մասնավոր կազմակերպությունների կողմից հումանիտար ծրագրերի համակարգման հարթակի բացակայություն և այլն), որոնց լուծումը ենթադրում է ավելի բարձր մակարդակներում աշխատանք:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել տարատեսակ արտակարգ իրավիճակների հետևանքով «տեղահանված/տարհանված անձանց ընդունելու ստանդարտ գործողությունների ընթացակարգեր» ընդունող համայնքի համար, ինչպես նաև այդ նպատակով համայնքի կարիքների գնահատման գործիքակազմ: Մշակված ընթացակարգերը, որպես հավելված, պետք է ինտեգրվեն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի կողմից 2019թ-ի դեկտեմբերի 30-ի N 1460 հրամանով հաստատված Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի օրինակելի ձևաչափում:

Միևնույն ժամանակ հաշվի առնելով 2019-2022թ-ի ընթացում ԱՌՆԱՊ հիմնադրամի և գործընկերների կողմից համայնքային մակարդակում ԱՌԿ պլանների մշակման փորձը, բացահայտված խնդիրները (այդ թվում՝ գենդերային խնդիրները) անհրաժեշտություն է առաջացել վերանայել և բարելավել օրինակելի պլանի ձևաչափը (բացի վերոնշյալ ձևաչափերի ինտեգրումից):

Համայնքի ԱՌԿ պլանի օրինակելի ձևաչափը բարելավելու (հաշվի առնելով նաև գենդերային խնդիրները), մշակված ընթացակարգերը ինտեգրելու և թիրախային 9 խոշորացված համայնքների ԱՌԿ պլանները մշակելու կամ վերանայելու համար ԱՌՆԱՊ հիմնադրամը կարիք ունի համապատասխան փորձագետի, որի աշխատանքի մասնամասները ներկայացված են ստորև:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Փորձագետն աշխատելու է ԱՌՆԱՊ հիմնադրամի տնօրենի անմիջական վերահսկողության ներքո, սույն ծրագրի պատասխանատուի համակարգման ներքո, «Արտակարգ իրավիճակների հետևանքով տեղահանված/տարհանված բնակչության՝ համայնքների կողմից ընդունելու ընթացակարգերի մշակման» փորձագետի և գենդերային հարցերով փորձագետների հետ համատեղ:

Փորձագետի աշխատանքից ակնկալվող արդյունքներն են.

1. Բարելավված/լրամշակված է համայնքի ԱՌԿ պլանի օրինակելի ձևաչափը (ներառված են/ինտեգրված են հնարավոր արտակարգ իրավիճակների (ԱԻ) հետևանքով ՀՀ-ից և Արցախից տեղահանված/տարհանված բնակչությանը ընդունելու՝ համայնքի կարողությունների բացահայտելու և կարիքների գնահատելու ձևաչափը/մեթոդաբանությունը/ուղեցույց, տեղահանված/տարհանված բնակչությանը համայնքի կողմից ընդունելու ընթացակարգերը, հաշվի են առնված գենդերային հարցերը, լրամշակված/բարելավված են այլ կոմպոնենտները):

2. Մշակված են թիրախային 9 խոշարացված համայնքների ԱՌԿ պլանները և ներկայացված են համայնքների ղեկավարներին՝ հաստատման և հետագա կիրառման համար:

Հատուկ նշում. *Փորձագետի աշխատանքային պարտականությունների մեջ է մտնում նաև «Արտակարգ իրավիճակների հետևանքով տեղահանված/տարհանված բնակչության՝ համայնքների կողմից ընդունելու ընթացակարգերի մշակման» փորձագետին աջակցելը՝ անհրաժեշտ ձևաչափերը և ընթացակարգերը մշակելու հարցում: Աշխատանքները կատարված և ավարտված են համարվում ԱՌԿ պլանների վերջնական տարբերակները ԱՌՆԱՊ հիմնադրամին տրամադրելուց և Հիմնադրամի կողմից դրանք ընդունելուց հետո:*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ:

Մեկնարկ – հուլիսի 25, 2022թ.

ԱՇԽԱՏԱՎԱՅՐ:

Հիմնական աշխատավայրը Երևանն է: Ծրագրի բնույթից և գործողություններից ելնելով՝ անհրաժեշտություն կլինի աշխատանքային այցերով լինել թիրախային համայնքներում և բնակավայրերում:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՍԱԿ:

Ծառայությունների վճարովի մատուցում

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՐԳԸ

Վարձատրության չափը պայմանագրային է, իսկ վճարման պարբերականությունը և կարգը սահմանվում է ԱՌՆԱՊ հիմնադրամի և փորձագետի միջև կնքվող պայմանագրով՝ փոխադարձ համաձայնությամբ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ:

Բարձագույն կրթություն՝ կառավարման, ճգնաժամային կառավարման, աղետների ռիսկի նվազեցման, սոցիալական կամ հումանիտար հարակից այլ մասնագիտացումներով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՐՁ

- Փաստաթղթեր, ուղեցույցներ, ընթացակարգեր մշակելու հմտություն և առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:
- Համայնքային մակարդակում աղետների ռիսկի կառավարման պլաններ մշակելու փորձ:
- Համայնքային մակարդակում իրականացված ԱՌԿ ուղղվածության այլ աշխատանքներ:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտի լավ իմացություն:
- Ուսումնասիրություններ իրականացնելու փորձ, խնդիրների վերհանման կարողություն, առաջնահերթությունները դասակարգելու հմտություն:
- Սոցիալական ոլորտի իմացություն:
- Տեղեկատվություն հավաքագրելու և վերլուծելու կարողություններ:
- Համակարգչային գիտելիքներ (MS Word, Excel, PowerPoint, Internet և այլն):
- Թիմում աշխատելու կարողություն և ցանկություն:
- Հաղորդակցության հմտություններ:
- Աշխատանքների պլանավորման հմտություններ:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ:

- Հայերենի գերազանց իմացություն (գրավոր և բանավոր):
- Անգլերենի և ռուսերենի իմացությունը դիտվելու է որպես առավելություն: